



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ԳՈՐԻՍ
ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ**

20/08/2019

ՈՐՈՇՈՒՄ N 66-Ա

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ԳՈՐԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ
ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՅՈՂ ԳՈՐԻՍ ՔԱՂԱՔԻ ՄԱՇՏՈՑԻ ՓՈՂՈՑԻ
ԹԻՎ 3 ՀԱՍՑԵԻ ԹԻՎ 2 ՎԱՐՉԱԿԱՆ ՇԵՆՔԻՑ «ԷԿՈԼԻԴ» ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ
ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆԸ ՎԱՐՉԱԿԱՆՈՒԹՅԱՄԲ ՏԱՐԱՃՔ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ
ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետով, 30-րդ հոդվածով, հիմք ընդունելով <<Էկոլիդ>> հասարակական կազմակերպության նախագահի 09/07/2019թ-ի դիմումը և համայնքի ղեկավարի տեղակալի առաջարկությունը, որոշման նախագծի քվեարկության արդյունքներով, կողմ՝ 8, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

1. ՀՀ Սյունիքի մարզի Գորիս համայնքի սեփականություն հանդիսացող Գորիս քաղաքի Մաշտոցի փողոցի թիվ 3 հասցեի թիվ 2 վարչական շենքի (վկ.՝ 1135304, կող. համ.՝ 09-003.2-1) 3-րդ հարկից (համաձայն սխեմայի) 8.9 քմ մակերեսով 1 սենյակ վարձակալությամբ տրամադրել <<Էկոլիդ>> հասարակական կազմակերպությանը 5 /հինգ/ տարի ժամկետով:

2. Տարածքի վարաձակալության վճարի չափը 1 քմ-ի համար սահմանել տարեկան 5000 /հինգ հազար/ ՀՀ դրամ:

Կողմ -8

Դեմ -0

Ձեռնպահ -0

ԱՂԱՋԱՆՅԱՆ ԷՐԻԿ


ԱՐԶՈՒՄԱՆՅԱՆ ՄՐԵՐ

ԳԵՎՈՐԳՅԱՆ ԳԱՐԻԿ

ԴՈԼՈՒՆՑ ԴԱՎԻԹ

ԼԱԶԱՐՅԱՆ ԿԱՐԵՆ

ՄԱՔՈՒՆՑ ՍԱՄԿԵԼ



ՄԿՐՏՁՅԱՆ ԱՐՄԵՆ



ՕՐԴՅԱՆ ՆԱՐԵԿ



ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱԿԱՐԻ ՏԵՂԱԿԱԼ



ՄԵՆՈՒԱ ՀՈԿՍԵՓՅԱՆ

2019թ. Օգոստոսի « 20 »
ք.Գորիս